

ՔՈԼՈՍՊԵԱՆ ՑՈՒՑԱՅԱՆ ԴԵՍՆ Ի ԾԻԳԱԿՕ

(Ցես յ'էջ 344)



ԻՄ առաջին թղթակցութեամբս խոստացայ այս մեծ հանդիսին նշանաւոր շէնքերուն եւ ցուցանելեաց վրայ առանձինն զրել, եւ աշխարհի սոյն վիթխարի ձեռնարկն քիչ թէ շատ պատկերացնել մեր ընթերցող հասարակութեան մտաց առջեւ: Բայց յառաջ քան զայդ՝ սա ըսելու եմ թէ տակիք պատկերս իրականին ճշգրիտ նմանութիւնն կամ ստորագրութիւնն ըլլալէ շատ հեռի է: Յաճախ կրկնեալ կարծիք մ'է թէ ոչ ոք կարէ լաւ գաղափար մը կազմել հանդիսիս մեծութեան եւ փառաբերութեան մասին, բայց եթէ անձամբ տեսնելով եւ ուսումնասիրելով զայն:

ՎԱՐՉՍԿԱՆ ՇԷՆՔՆ

Այս շէնքն ճարտարապետական գոհար մ'է, եւ թագուհի կրնայ կոչուիլ հանդիսին այլ բոլոր հակայակապ եւ հոյակերտ շէնքերուն: Ըարտարապետն Ռիչըրտ Հընթ իւր բոլոր հանձարն եւ գեղագիտական կարողութիւններն գեղախօրէն շուայած է այսպիսի հրաշակերտի մը ծնունդ և գոյութիւն տալու: Շէնքն չպարունակեր որ և է ցուցանելիք, այլ ինքն ցուցանելիք մ'իսկ է. գեղեցիկ է շէնքն եւ գեղեցիկ եւս կ'ըլլայ ելեքորական լուսով, եւ արժանի ամենուն անկեղծ սքանչացման: Երեկոյ մը անցուցի անցեալ օրեր յաճախ ներբողեալ լուսավառութեանն և հրախաղութեան հանդիսատես ըլլալու: Անկարելի էր խուսել հոգեզմայլութենէ:

Շէնքն կառուցուած է 262 քառակուսի ոտք գեանի մը վրայ: Չորս կողման վրայ մեծադիր դրունք շէնքին ասպնջատիտական հանգամանք մը կուտան և ամէն գեղատէր անձ 'ի ներս կը հրապուրեն: Այս դրանց կողմանց վրայ կան քանդակեալ ծեփերով սպիտակ պատկերներ: Ասոնք կը ներկայացնեն բնութեան շրոքը հակաբնոյթ տարերք, Հուր, Զուր, Օդ և Հող: Խրաքանչիւր դրան մէկ կողմին վրայ դրուած է տարբն իւր բնական վիճակին մէջ, իսկ միւս կողմն տարբն ընկճեալ եւ մարդոյ ի ծառայութեան: Շէնքին գմբէթն 250 ոտք բարձր է կեդրոնէն, եւ հիանալի երևոյթ մը կ'առնու արհեստական լուսով, թէ եւ ոչ ինչ ընդհատ գեղեցիկ է բնական լուսով եւս: Գմբէթին ներսն կրկին ծածկուած է գեղեցիկ քանդակներով. որոց առ ոտս կան զեղասառ զրուած ակնասուր անձանց անմահ անուաներ եւ մեծ դիպաց թուականներ: Շէնքին չորս անկիւններն ութանական ոտք խորութեամբ անջատուած են, եւ վարչութեան անդամոց պաշտօնարաններ

ըլլալու յատկացուած են : Երկրորդ յարկին մէջ է սրահն ուր նուազա-
խուժին 50 կամ առաւել անձանց մասնակցութեամբ զուրս կը բերէ երա-
ծըշտական հրաշալիքներ ի լուր եւ ի հաճոյս այն խումն բազմութեան՝ որովք
շէնքերու այս իշխանուհին շրջապատեալ է միշտ :

Շէնքն արտաբնական անգերազանցելի գեղեցկութիւն ու շքեղութիւն ունի :
Տանեաց անկիւններն կան երեքական արձաններ, որք կը ներկայացնեն այլ
եւ այլ վերացական գաղափարներ . Ոյժ , Հայրենասիրութիւն , Կրօնասիրու-
թիւն , Ազատասիրութիւն : Այս երկրորդ յարկին տանիքն է , եւ ասոր ան-
միջապէս յարակից է ճեմելիքն որմէ վեր կը բարձրանայ սակեղոյն գմբեթն :
Շէնքին գուն կը լուսաւորի ճեմելեաց վրայ 24 մեծաբոց ջահերով , իսկ
գմբեթէն ի կախ կան շառաւղածու ելեքորական լուսոյ շարոցներ որք կը նա-
ռագայթին գմբեթին գագաթէն :

Այս շէնքին առջեւ , արեւելեան կողման վրայ տեղի կ'ունենայ հանապազ-
օրեայ լուսալստութիւնն եւ հրախաղութիւնք , որք կրկնակի փայլ կուտան
այս շէնքին : Հոս է նաեւ ընակն , ուր կը վիտան վենետկեան կոնտողա-
ներ , ելեքտրաշարժ նաւակներ , եւ ուր են ամէն կարգի նաւակներ առ ի
գրօսանս հասարակութեան : Հոս կ'այցելեն կարճահասակ Եսքիմոցիք իրենց
կոշտ այլ արագասոյր նաւակներով : Ընակն զինք շրջապատող շէնքով լուսով
ողողեալ էր համակ՝ երբ երեք նուազախմբեր սկսան այլ և այլ երամշտական
կտորներ տալ մին զինի միայ եւ երեկոյեան քաղցրասիւզ հողմոյն հետ ան-
սահման բերկրութիւն առթել մեզ : Ելեքտրական շատրուաններ ցնցղացան
զուրս ժայլեքելով որպէս թէ երկնեանց ջրոց հոսանքներ՝ մինչ ելեքտրա-
կան Որոնոզ լոյս (Search-light) պահ ընդ պահ կը թափէր լուսոյ
առատ հոսանք մը , մէկ մը ֆոլոմպիական շատրուանին , մէկ մը Ազատու-
թեան արձանին , մէկ մը ֆոլոմպոսի քառասնի կառքին , եւ մէկ մը երկրա-
գործական եւ այլ շէնքերու վրայ :

ԱՐՁԱՆԱԿՈՐԾՈՒԹԻՒՆՔ .

Ի միջի այլ հարիւրաւորաց հետեւեալք յոյժ նշանաւոր են՝ եւ արժանի
իրենց սէրերուն անուանքն անմահացնելու :

1 . Քոլոմպիական շատրուանն : Ասիկա քանդակագործական հրաշալիք մ'է .
Քանդակագործն Մաք-Մօնիս՝ այս գործն փարիզի Արուեստահանդիսին շա-
րուանին գաղափարով շինած է . միայն թէ յոյժ բարեփոխեալ , որպէս կը
հաւասանն արուեստազէտ քննադատք : Արձանս կը ներկայացնէ նաւակ մը
որոյ մէջ գահաւորակի մը վրայ մեծափառ նստած է Քոլոմպիա դիցուհոյ մը
կերպարանոյ . նաւակն միջնադարեան է՝ որուն լծուած են չորս ծովաձիք ու
բոց ունզերէն զուրս կը վիթէ ջուրն : Կան նաեւ չորս կանացի պատկերներ
որք թի կը քաշեն կրկնակի արագութիւն տալու ազատութեան եւ գիտու-
թեան սոյն նաւակի ընթացքին : Չորեք թիալար կանայք կը ներկայացնեն

գիտութեան եւ արուեստից սփիներ, եւ ի ծառայութեան են ֆոլումպիայի որ մարմնացումն է ազատութեան եւ զօրութեան :

2. Հասարակապետութեան արձանն դէմ յանդիմանն է ֆոլումպիա չրցայտին : Սա քաջարի կնոջ մը արձանն է, Վիլիսիարի մեծութեամբ եւ զոգցես կ'արհամարհէ ամէն բռնութիւն եւ անիրաւութիւն : Մարմինն ամբողջ յատից ցկատար 65 ոտք է, եւ կեցած է 35 ոտք բարձրութեամբ պատուանդանի մը վրայ . յաջ ձեռին ունի երկրագունտ մը որոյ վրայ թառած է երկնասլաց եւ ազատաշունչ արծուին, նշանակ հասարակապետութեան . իսկ ի ձախ ձեռին ունի իշխանական մական մը՝ որ պսակեալ է ազատութեան սուղաւարտով : իսկ արձանն կը կրէ յաղթութեան դասին յիւր ի գլուխ :

3. Ասոր ետեւն է ֆոլումպոսի քառաձի կառքն : Հանդիսին դիւցազն իւր վեհ պանծալի մարմնով կանգնած է եւ ի ձեռին ունի փրփրեբախ երկվարաց երասանակներ : իսկ պատանդանիսին վրայ յոտին կանգնած են զոյգ մը ու գիբ ի ձեւ կանանց եւ ուղղութիւն կուտան ձիոց :

Չմոռնամ ըսելու, թէ այս եւ թէ երկրագործական շէնքին արձաններ գանձայ շեն, այլ բուռ (plaster), իրենց արժէքներն իրենց մեծ արուեստին եւ խորհրդաւորութեան մէջ է : իսկ այս դասու մեծ գործեր տեսնելու համար օր մը առանձինն այցելու են գեղարուեստից սրահն : Հոն պիտի տեսնենք զանցայ և պղնձեայ արձանք՝ լի ամէն կատարելութեամբ եւ պերճութեամբ :

Մը . Չանսի Տըփիւ Ամերիկայի հասարակապետականաց մեծ բանախօսն ասեմաբանութեան մը մէջ սա բացատրութիւնն գործածած է . « Այս մեծ ցուցահանդիսին համար մակդիրներու եւ ածականներու գերադրականներն՝ հասարակապետութեան գիտողին զգացումներն եւ սքանչացումներն » :

Ամերիկայի-Միացեալ նահանգաց նախորդ նախագահն որ մեծ համբաւ ունի իբր գիտնական եւ քաջու ոք, այսօր իւր մէկ ուղերձին մէջ « Գերբնտիր » եւ « Գերազանց » կոչած է հանդէսն * :

ՀԱՆՁՊԱՏԿԵՐ ՄԸ

Ըստ որում յաջորդ նամակներով ցուցանելեաց վրայ պիտի ծանրանամ մեծապէս, այս առթիւ խօսիմ ուշագրաւ հակապատկերի մը վրայ որ ամէն օր դիտելի է : Միտուէջ Փլէզանո (Midway Plaisance) հանդիսին այն մասն է՝ որ յատկացուած է օտար ազգաց քաղաքակիրթ, կէս-քաղաքակիրթ եւ բարբարոս ժողովրդոց տիպար գիւղականերու եւ վաճառանոցներու, յոյժ հետաքրքրական հակապատկեր մը կը ներկայացնէ : Հոս է շիկաներ Ռուսին

* Եւրոպական մեծ անձնաւորութեանց մէջ որ այց տուած են հանդիսիս, նշանաւոր են իշխանուհի Իւլիա Ինֆանթա Սպանիոյ եւ իւր այլն ու արբանեակն : Վէրակուայի դուքան եւ իւր արբանեակք : Աւաղինն Իլպայիլայ տահմէն՝ վերջինն ֆոլումպոսի : Այս օրեր ի Շիգակո եւ նաեւ Ռուսիոյ Չարին հօրեղբորդին մեծ Գուրս Ալեքսանդր :

Մտքովական զղեակն, եւ կրակոտ իրլանարացոյն խրճիթն : Հոս է եզիպ տացոյն եւ Սիրիացոյն պազարն, եւ բոկոտն Մահոնահիին վրանն : Հոս մզկիթներու մինարէներէն թուրքն ու պարսիկն յաղթմա կը հրաւիրուի, եւ հոս Չինացին ու Ճափոնացին իրենց բազմաթիւ աստուածներէն զորս աստ բերած են կը պաշտեն : Հոս կը լսուի նաեւ արեւելեայց միօրինակ եւ անփոփոխ երաժշտութիւնն, եւ Չինացոյն դժոխալուր խոնտիւնն : Հոս կը տեսնուի ազգաց բարուց եւ զարգացման տարբերութիւններն : Ինչ որ սարսափ կ'ազդէ Եւրոպացոյն կամ Ամերիկացոյն՝ իբր երկնային մեղեդի կը հընչէ յունկա Չինացոյն : Ինչ որ թմբիկ կը բերէ արեւմտայց՝ կարծես ոզի կը ներշնչէ արեւելեայց եւ անոնց ոտքերն ի խաղ կը հանէ :

Կ . Մ . Մանակեան

Շարայարեյի

Ա . Ռ . Ա . Կ

ԿԱՂՆԵԾ ԵՐ ԿԱՂՆԵԾԱԿ

Պարտիգի մէջ երկնից կը պած՝
 Կար կաղնի մի թւատարած .
 Հեռի իւր բունէն՝ բայց ճիւղերուն տակ
 Կար այլ մի փոքրիկ և տրկար կաղնեակ :

Իւր խօսքն հազիւ էր աւարտեր,
 Յանկարծ բացաւ հողմն իւր թևեր .
 Դէզ դէզ ժողովեց ամպերն ամենուստ,
 Փայլակ որոտում փրբթուց 'ի վերուստ :

Կը ծաղրէր գայն կաղնին հըպարտ՝
 Չար նախանձով իւր դատապարտ,
 Երբ խորհէր՝ թէ նա իրեն պիտ'հասնէր .
 Եւ գլխուն տարափ տերն կը թափէր :

Հըպարտ կաղնոյն այն գըլուխ սին
 Կը տատանէր վերայ սևսին . [տուկ .
 Բարկութեամբ լըցուած՝ կը մոռնչէր տաղ .
 Փոքրիկն այլ վայրէն կը ժըպտէր գաղտուկ :

« Ա՛յ դու գածած, կը գոչէր նա,
 է՛, սոսկացիւր հանգարտ մընա .
 Կարող եմ ըզքեզ այս ժամուս խեղդել .
 Թէ քեզ կ'ողորմուս, սէգ ընթացք արգել »

Կայծակ մ'իջաւ յանկարծ ամպէն,
 Ճեղքեց տապլեց սէգն արմատէն : —
 Մի՛ փըքայք ունայն, գոռոպէ իխեսցող .
 Թէ՛ ոչ բարկութեամբ երկնից լինիք հող :

Պոռեստ

